ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հոկտեմբերի 2022 թվականի № -Ա
ք. Երևան

«ՎԵՆՏՈՒՍ ԷՆԵՐՋԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՎԵՆՏՈՒՍ-1» ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻՑ ԱՌԱՔՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի օգոստոսի 7-ի №295Ա որոշմամբ «ՎԵՆՏՈՒՍ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածոտն համայնքի վարչական տարածքում «Վենտուս-1» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0649 լիցենզիան (այսուհետ՝ Լիցենզիա), ինչի համար ի թիվս այլ փաստաթղթերի հիմք են հանդիսացել 2019 թվականի հուլիսի 12-ի էլեկտրաէներգետիկական համակարգին միացման №ՏՊ-200-110/0476 նախնական տեխնիկական պայմանը և Կայանի կառուցման (շահագործման և սպասարկման) համար անհրաժեշտ 8,40513 հա հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցման №18062019-02-0029 վկայականը,
2) Ընկերությունը 2022 թվականի սեպտեմբերի 22-ին ներկայացրել է արտադրության փուլ անցնելու նպատակով Լիցենզիայում փոփոխություններ կատարելու մասին դիմում և սակագնի սահմանման (վերանայման) հայտ՝ ի թիվս այլ փաստաթղթերի ներկայացնելով նաև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի մայիսի 20-ի էլեկտրաէներգետիկական համակարգին միացման №ՏՊ-200-110/0476-Հ տեխնիկական պայմանը, համաձայն որի՝ փոփոխվել են բաշխման ցանցին Կայանի միացման լարման պայմանները՝ նախկին 110 կՎ-ի փոխարեն դառնալով 10 կՎ: Ընկերությունը 2022 թվականի սեպտեմբերի 26-ի

գրությամբ ներկայացրել է նաև Կայանի շահագործման և սպասարկման համար անհրաժեշտ 12.95512 հա հողամասի և նրանում կառուցված Կայանի նկատմամբ Ընկերության սեփականության իրավունքի պետական գրանցման №22092022-02-0058 վկայականը,

3) Հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի №359Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգի 11-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը հայտի ստուգման արդյունքների մասին գրավոր տեղեկացնում է հայտատուին հայտը մուտքագրվելու օրվանից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հայտի ստուգման դրական արդյունքի դեպքում այն ընդունվում է ուսումնասիրության: Կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման հայտն ընդունվել է ուսումնասիրության, որի մասին Ընկերությունը տեղեկացվել է Հանձնաժողովի 2022 թվականի սեպտեմբերի 30-ի № ԱՍ/34.3-Մ2-3/3396-2022 գրությամբ,

4) Հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 22-ի №88Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկայի (այսուհետ՝ Մեթոդիկա) 3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Մեթոդիկայի 1-ին կետի 7-րդ ենթակետի «բ» պարբերությամբ նշված և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված հաշվարկային հզորությամբ կառուցված կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի տրամադրման համար հիմք հանդիսացած փաստաթղթերով ներկայացված կայանի կառուցման համար անհրաժեշտ հողատարածքի (բացառությամբ կայանը էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միացման համար անհրաժեշտ օդային գծերի, հենասյուների, հաշվառման համակարգի, բաշխման ցանցին միացման կետում այլ օժանդակ սարքավորումների տեղադրման համար անհրաժեշտ հողատարածքի) փոփոխման (ընդլայնման) կամ էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միացման լարման փոփոխման դեպքերում սահմանվում է Մեթոդիկայի 3-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն համապատասխան ժամանակահատվածի համար ձևավորված մեծության և 0.9 գործակցի արտադրյալին հավասար,

5) Ընկերության ներկայացրած՝ Կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման հայտի ուսումնասիրության արդյունքում, Հանձնաժողովի գնահատմամբ, սակագինը ենթակա է սահմանման ներկայում գործող Մեթոդիկայի 3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, քանի որ տեղի է ունեցել Լիցենզիայի տրամադրման համար հիմք հանդիսացած փաստաթղթերով ներկայացված՝ անհրաժեշտ հողատարածքի (բացառությամբ կայանը էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միացման համար անհրաժեշտ օդային գծերի, հենասյուների, հաշվառման համակարգի, բաշխման ցանցին միացման կետում այլ օժանդակ սարքավորումների տեղադրման համար անհրաժեշտ հողատարածքի) փոփոխում (ընդլայնում) և էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միացման լարման փոփոխություն, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 22-ի №88-Ն, 2022 թվականի մայիսի 25-ի №217-Ն որոշումները՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. «ՎԵՆՏՈՒՍ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Վենտուս-1» արևային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանել 22.547 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից յոթնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան կամ երկամսյա ժամկետում՝ Հանձնաժողով, և բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հոկտեմբերի -ից և գործում է մինչև 2023 թվականի հուլիսի 1-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
հոկտեմբերի 2022թ.